**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

---

02.05.2012թ.
ԳԱ 48

ՀՀ Լոռու մարզպետ պ-րն
Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արջուտի գյուղապետի թիվ 21-24 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ [illegible]. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ**

---

14.04.2012թ. թիվ 21

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու N 633-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի «է» ենթակետով՝

Որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:
2. Սույն որոշմամբ հաստատված պլանը համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի հետ:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ կից հավելվածներով:

Գյուղապետ՝ Վ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ**

18.04.2012թ. թիվ 22-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ 06-019-041-008 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2010թ-ի օգոստոսի 12-ի թիվ 1004-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով Վահան Պողոսյանի անձնական դիմումը`

Որոշում եմ`

1. Վերականգնել Արջուտ համայնքի 06-019-041-008 ծածկագրի տակ գտնվող 0.08092 հա /ճշտված սահմաններով/ տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը և նշված ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վահան Պողոսյանին` ճանաչելով նրա սեփականության իրավունքը:
2. Տրամադրել փոստային հասցե` գ. Արջուտ, 21 փողոցի հող 19:

Գյուղապետ Վ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ**

---

18.04.2012թ. թիվ 23-Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 071-014 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏԱՆԸ ԵՎ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 071-014 ծածկագրի տակ գտնվող տանը և տանը կից 0.1816 հա տնամերձ հողամասին տրամադրված է փոստային հասցե՝ գ. Արջուտ, 11 փողոցի 11 նրբանցքի տուն 3:

Գյուղապետ՝ Վ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ**

---

23.04.2012թ. թիվ 24

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի բնակիչների անձնական դիմումները՝

Որոշում եմ՝

Համայնքի 2012 թվականի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, 4729 հոդվածով նախատեսված միջոցներից համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն.

1. Խանոյան Ռոզա - 35 000 դրամ
2. Դանականյան Արտաշես - 30 000դրամ
3. Կիրակոսյան Սիդա - 30 000դրամ
4. Աբրահամյան Սամվել - 20 000դրամ
5. Խաչատրյան Գևորգ - 25 000դրամ
6. Բալայան Ռաիսա - 30 000դրամ

Ընդամենը - 170 000դրամ:

Գյուղապետ՝ Վ. Մկրտչյան